

**Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն
առարկայի օլիմպիադա 2018թ.
ՄԱՐԶԱՅԻՆ/ՔԱՂԱՔԱՅԻՆ/ ՓՈՒԼ
8 - րդ դասարան**

Տևողությունը՝ 120 րոպե:

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:

Տեստային առաջադրանքին տրված ճիշտ պատասխանը գնահատվում է 1 (մեկ) միավոր, իսկ գրավոր առաջադրանքին՝ 0.5 (կես) միավոր:

1. Դեռևս հին դարերում բանակի գերագույն գլխավոր հրամանատարը՝

ա) Սպարապետն էր

բ) Հազարապետն էր

գ) Թագավորն էր

դ) Հարյուրապետն էր

2. Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի հեղինակներն են՝

ա) Ճարտարապետ Խաչիկ Անեցին և
Թորոս Ռոսլինը

գ) Ճարտարապետ Լևոն Կյուրեղյան
և նկարիչ Մարտիրոս Սարյան

բ) Ճարտարապետ Ալեքսանդր
Թամանյանը և նկարիչ Հակոբ
Կոջոյանը

դ) Ճարտարապետ Երվանդ Քոչար
և նկարիչ Մինաս Ավետիսյան

3. Ըստ կտրտվածության աստիճանի տեղանքը լինում է.

ա) թույլ, միջին և խիստ կտրտված,

բ) թույլ, միջին և կտրտված,

գ) միջին և խիստ կտրտված,

դ) խիստ կտրտված և թույլ:

4. Ի՞նչ է կողմնացույցը:

ա) Կողմնացույցը պարզագույն սարք է, որով որոշում են Հյուսիսը, հարավը,
Արևելքը և Արևմուտքը:

բ) Կողմնացույցը պարզագույն սարք է՝ հորիզոնի կողմերը կամ կոմնորոշիչի ուղղությունը որոշելու
համար:

գ) Կողմնացույցը բարդ սարքավորում է՝ հորիզոնի կողմերը կամ կողմնորոշիչների ուղղությունը
որոշելու համար:

դ) Կողմնացույցը պարզագույն սարք է՝ առարկաների դիրքերը և հեռավորությունները որոշելու համար:

5. Քանի՞ կանոնադրություն ունի ՀՀ զինված ուժերը.

ա) 1

գ) 3

բ) 2

դ) 4

6. Հրաձգության կանոնների յուրացումը պարտադիր պայման է մարտում զենքը՝

ա) գրագետ օգտագործելու նպատակով,

բ) ճիշտ օգտագործելու համար,

գ) անփորձանք օգտագործելու նպատակով,

դ) անվտանգ օգտագործելու նպատակով:

7. Հարձակման ժամանակ յուրաքանչյուր զինվոր պետք է ցուցաբերի .

ա) Համարձակություն և քաջություն

գ) Արիություն և քաջություն

բ) Համարձակություն, խիզախություն

դ) Համարձակություն և արիություն

8. Շարքի ճակատի հակադիր կողմը կոչվում է՝

ա) Ետնակողմ

գ) Թև

բ) Թիկունք

դ) Ետնամաս

9. Հարձակման վճռական պահը՝

ա) կործանելն է:

բ) հարվածելն է:

գ) գրոհն է:

դ) սրընթաց հարձակվելն է:

10. Առաջին և վերջին տողաններում կանգնած զինծառայողների միջև եղած հեռավորությունը կոչվում է՝

ա) Շարքի լայնություն :

գ) Շարքի երկարություն:

բ) Շարքի խորություն:

դ) Շարքի հեռավորություն:

11. Կրակային պատրաստությունը ընդգրկում է՝
12. Բանակը կազմված է՝
13. Որտե՞ղ պետք է գտնվի զորամասի մարտական դրոշը մարտի ժամանակ:
14. Հորիզոնի կողմերը Արեգակի և ժամացույցի օգնությամբ որոշելու համար անհրաժեշտ
15. Ինչպիսի՞ կարևոր հատկություններ է զարգացնում ռազմական տեղագրության ուսուցումը զինծառայողների մեջ:
16. Ինչպիսի՞ որակներ է դաստիարակում շարային կեցվածքի ընդունումը զինծառայողների մեջ:
17. Դիտարկման հարմարավետության համար նշված հատվածը ինչպիսի՞ գոտիների է բաժանվում:
18. Հրաձգության ժամանակ պահպանվում են անվտանգության հետևյալ կանոնները.
19. Հրաձգության ավարտից հետո ինչ են անում չօգտագործված զինամթերքը և զենքը:
20. Ժամանակի առկայության դեպքում անհատական խրամատը պետք է խորացնել: